

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրութեւն են միմիային խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Կիւմարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).
Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիցուով.
Յայտարարութիւնները համար վճարուած են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերականացի զբոսայգի.
Մատենագրութիւն. Ռուսաց թատրոն. Նամակ
կիւմարութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐ
ՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ.—ՅԱՅՏ
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալ
լիայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՆԻՆԵՐԱՅ ԶՐՈՅՑ

Խոնարհվեց, ընթերցող, փողի առաջ. երկըր
պագենք աղայութեան. Բայց զլիով, ձեռքերս
կրճենք զբաժնի, ինչո՞ք ու հեղ կանգնեց
նրա առաջ, պատրաստ պաշտելու. նրա իւրա
քանչիւր քաղաքացիութեանը Ուսեղ, այն, սար
ափին ուսեղ է աղայութիւնը. իսկ մեր ժո
ղովորդը ստրկական դարերի մի երկար շար
քից զուրա է բերել հետեւեալ իմաստութիւնը.
«Երբ չես կարողանում կարել մի ձեռք, համ
բուրիք նրան ու ձակաւորդ դիր»:

Մենք էլ համբուրենք աղայութիւնը, ձա
կաւորներս վրա բազմեցնենք նրան. Ուրիշ ձա
ր չը կայ...

Այս հասկացայ եւ Եղիշ վարդապետ Մու
րադեանի նամակից, որ տպագրւեց «Մշակ»
№ 120-ի մէջ:

Դուք շատ լաւ ծանօթ էք Կաղզուանի մէջ
բորբոքած մի վէճի հետ. գիտե՞ք, որ այդտեղ
մի կողմում կանգնած էր տեղական ժողովուր
դը, միւս կողմում տեղական մի աղայ. Կարող
էր թաւրդի հայը երբ եւ ինչ երեւակայել. թէ
Կաղզուանի վէճը մի գեղեցիկ օր պիտի կանգնէ
իր առջեւ. Ո՛ր թաւրդը, ո՛ր Կաղզուանը:

Եւ սակայն սա փաստ է:
Սուքիա արքեպիսկոպոս Պարզեան կաղ
զուանցի աղայի բարեկամն է. հետեւաբար նրա
համար թշնամի պիտի լինի աղայի իւրաքան
չիւր թշնամին: Սուքիա արքեպիսկոպոսի պէս
բարեկամներ շատ կան Եղիշում: Եւ չեն
կարող չը լինել. Աղայական քաղաք. Հեշտ է...
Եղիշ վարդապետ Մուրադեան իսկոյն հե

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թողութիւն տպագրութիւններ)

IV

Ս. Ղազար եւ գնում. Մանկութիւնից եւ
երազել այս օրը, այն անդադնալի կերպով ան
ցած ժամանակներից, երբ զեռ չէին հասկա
ւած, «Ո՛րի քնար հոգեւորական»-ը եւ երբ արեւոտ
փղձկում էր «Ո՛վ դու բարեկամ»-ը կարդալիս:
Բարատունիներն ու Ալիանները հեռուից ա
ռեւ զիւրեմ, քաշում են ինչ հաճելի է օտար
երկրում հայրենիք զգալ այսպէս խորունկ կե
րպով:

Վենետիկեան դարձանային օր է: Հիւրասէր
մենաստանն իր նաւակն ունի ծովափին. Ու
ղիզ ճաշ է: Մի ծեր եւ մի երիտասարդ իտա
լացի թիւփարների յաղթ բազուկներով սեւ
կոկիկ նաւակը պանում է հարաւային արեւի
վառ շողերով ողողված ջրերի հայելանման մա
կերկրային վրա: Ծուրջս ամեն բան ծպտում է
եւ՝ արեւը, եւ՝ ջրերը, եւ՝ գոնդօնները. իսկ
այս երկինքը՝ ինչ յստակ է ու կապոյտ: Մի
ուրախ տրամադրութիւն է իջնում վրաս. թը
ւում է՝ երկար տարիներից յետոյ հայրենիք եւ
գնում, մայր երկրի մի կողմը պիտի տեսնեմ
եւ այնտեղ հոգեւորական ծերունուն. հիւսուրդ
նահագնեմ:

Տեղատեղութիւն է. ջրի տակից բազմաթիւ
կղզիներ են դուրս ցցվել. աւազապատ կամ
կանաչ, եւ նրանց միջից գալարվում է խոր
ջրանցքը, ինչպէս մի լայն գետ: Զրանցքի եր
կու կողմերում, զանազան ուղղութեամբ, շար
ված են ուղեցոյց հաստ ցիցերը, որպէս լու
սաւորանքներ ընդհատ ալիքների կատաղութեան
զէմ: Այստեղ այնտեղ կղզիների ափին, ծան

ուցնում է Կարսից: Անյարմար է, որ աղայի
ընտելութեան տեղում լինի մի մարդ, որ «հրա
մանք» չէ առում:

Այս բոլորը շատ լաւ: Գործողութիւնները
այսպէս թէ այնպէս արգարացնող մի հանգա
մանք էլ կայ—աշխարհագրական յայտնի տա
րածութիւն: Միանգամայն պարզ ու հասկա
նալի է հետեւեալ գրութիւնը. Պարզեան կապ
կոպոսը Երեւանի փոխանորդ, Մուրադեան
վարդապետը—Կարսի փոխանորդ: Դուք հաս
կանում էք, երբ ձեզ ասում են. երկուսը միա
միջ չեն կարող լինել մի թեմում: Եւ կատար
վում է դա...

Բայց թաւրդը... Ինչ գործ ունի նա մէջեւ:
Անա ինչ: Պարզեան արքեպիսկոպոսը—այս
պէս է պատմում Մուրադեան վարդապետը—
նամակ է գրում թաւրդը, թէ Եղիշ վարդա
պետին մի ընտելք առաջնորդ: Թաւրդում
ընտելներն մի մասը լուծ է. Ղալա թաղի
պատգամաւորներն են զրանք, աղայական—
պահպանողական դասակարգից: Ընտելութեան
օրը այդ պատգամաւորները յանկարծ մի հրա
շալի միջոց են գտնում Երեւանի փոխանորդի
հաճոյքը կատարելու համար,—նրանք իրանց
երկայ են հրատարակում. Եւստ լաւ բան է
երեւան: Ընտելական ժողովի մէջ այդ բն
խերաւոր երեւանները կանգնում են եւ սկը
սում լայ լինել:

—Մենք անձեռնհաս ենք, ասում են նրանք
մի սուրբ անմեղութեամբ.—մենք չենք հաս
կանում, մենք ընտել չենք կարող, որովհե
տեւ... նա, երեւաններ ենք: Թող մեզ հայրու
թիւն անող լինի. ինչներն է պէտք ընտել
ութիւնը. խնդրենք, աղայներ, որ մեզ համար
առաջնորդ ուղարկեն...

Այսպէս են խօսում Ղալայի բնիկները եւ
բնիկները: Ասում են, մարդարիտներ են թա
փում հէր-օրհնածները, թափում են բիւրեղի
նման արտասուքներ, որոնցից ամեն մի հա
տիկը մեր բանաստեղծների համար մի պոէ
մայի նիւթ կարող էր դառնալ:

Բայց ի՞նչու, Ո՛չ Ապօլլոնեան քնարի ծանրու

ծաղուտների մէջ, ինչպէս միտքով կամ շու
րած, անշարժ կանգնած է մի ձկնորսական նա
ւակ, իսկ նրա տէրերը, երկու ընկերներ կամ
մի հայր ու որդի ձեռքերով խառնում են ջու
րը կամ փոքրիկ ցանցերը քաշում եւ դուրս
հանում ջրից այն բոլորը, ինչ որ շարժուն է,
ինչ որ կենդանու հետաւոր նմանութիւն ունի:
Ծովափնայ ժողովուրդը ջրային կենդանի
ների մէջ խտրութիւն չէ գնում: Ծովային գիւ
ւորները, մեծ ու փոքր նաւակներով սփռված
ջրերի վրա, զանազան վարժութիւններ են կա
տարում թիւփարներով եւ իրանց ուրախ աղա
ղակներով լցրել են չըջալայքը:

Երեւան երեւան մեր կողքից անցնում են
մենք ու փոքր շողեւանք բազմութեամբ լցված
ջրերի վրա, զանազան վարժութիւններ են կա
տարում թիւփարներով եւ իրանց ուրախ աղա
ղակներով լցրել են չըջալայքը:
Երեւան երեւան մեր կողքից անցնում են
մենք ու փոքր շողեւանք բազմութեամբ լցված
ջրերի վրա, զանազան վարժութիւններ են կա
տարում թիւփարներով եւ իրանց ուրախ աղա
ղակներով լցրել են չըջալայքը:

Մեզանից զէպի ձախ երեւում է մի կանաչ
ծառախումբ. դա վենետիկի միակ պարտէզն է,
միակ տեղը, ուր վենետիկից մանուկը գաղա
փար է կազմում ծառի, բուսականութեան մա
սին: Ծովը հազիւ է համաձայնել քանի մի չեւ
հող տալ աներ չինելու համար. ծառերի, պար
տէզների տեղը կատարեալ չափութիւն կը լի
նէր: Աւելի հեռուն Լիդո պատմական կղզին է,
կանաչապատ ու ծառազարդ, որ ինչպէս մի
հսկայ օձածուկ կիսաշրջանով պատկէ վենե
տիկի առաջը եւ մէջը զէմ տուած լայնարձակ
ծովին, ասես ուխտել է յաւիտեան հսկել այն
տեղ եւ մեղմել հեռու խորքերից եկած ալիք

թեան տակ քրտինք թափող բանաստեղծներ
են յայտնվում թաւրդի ընտելական ժողո
վում, ոչ ներկայ կողմ միւս պատգամաւորներն
են զգացվում, խղճում ողորմելի երեւաններին:
Միանգամայն ապարդիւն էր արտասուքի հե
ղիւրդ, ասում են, որ նոյն իսկ ծառան, որ ժո
ղովից յետոյ արւում էր սենեակը, նոյն իսկ
ծառան էլ չը խղճարկեց...

Անգութ մեծեր. նրանք վճռել են ընտել
ութիւն կատարել: Եւ երեւանները—էլ ինչ ա
նէին—դուրս են գնում ժողովից, խնդրելով
արձանագրել, որ իրանք երեւաններ են եւ չեն
կարող ընտելութիւն կատարել...

Պատմութեան ամենանշանաւոր մասը այս
վայրկեանից է սկսվում Երեւանները դուրս են
նկել ժողովից: Թաւրդը եւ չեմ տեսել, բայց
ինչ պատմել են, որ այնտեղ փողոցների վրա
պատահաններ չը կան. միայն խուլ ու անթա
փանցելի պատեր են բարձրանում փողոցի եր
կու կողմերում: Մահէղական Արեւելքի բար
քերին ծանօթ մարդիկ ասում են, որ այդպէս
անվում է այն պատճառով, որ կանայք չը
տեսնեն փողոցով անցնողներին եւ փողոցով
անցնողները չը տեսնեն կանայց:

Ուրեմն թաւրդի փողոցները լաւ են մա
նաւանք երեւանների համար, թէ եւ դրանք լի
նեն նոյն իսկ բնիկներ: Երեւանները Արեւել
քի կնոջ հրաշքով աչքերը չէին կարող տեսնել.
Թէ ինչպէս Ղալայի բնիկները երեւանները,
ժողովից հեռանալիս անդադար յետ ու յետ են
նայում եւ ասում են ժողովի դահլիճում մնա
ցած պատգամաւորներին. «Կը տեսնե՞ք, կը
տեսնե՞ք, թէ ինչ կանանք մենք ձեր ընտել
առաջնորդին»: Կասկած չը կայ, որ եթէ պարս
կական սովորութիւնը թող տուած լինէր ծա
կոտել պատերը զէպի փողոցի կողմը, արեւել
քի հրաշքով աչքերով կանայք, տեսնելով Ղա
լայի երեւաններին, հեղեղութեամբ երեւան կը
հանէին իրանց «սաղափի պէս սպիտակ առամ
ները», զեղեցիկ քիթները վեր կը քաշէին եւ
վարդապետ ջրթններն արանքով կը փչացո
ւէին:

ների կատաղութիւնը:

Մեր նաւակն անցնում է մի կղզու առաջից,
որի վրայի չինութեան ճակատին գրված է «Fate
bene, fratelli»—«Բարեւ արարե՛ք, եղբայրներ»:
Խնկները ապաստանն է,—պատասխանում են
իմ հարցին: Այստեղ ապրում են 5—6 հարիւր
զգաբազաններ եւ կրօնական մի ուլա նրանց
ինամելու վսեմ պարտքն է յանձն առել: Հա
ւատացնում են, որ դուռն ճակատին փայլող
նշանաբանը ամենալայն գործադրութիւն է
գտնում այդտեղ: Այս կղզու զէմ ու զէմը
գտնվում է մի այլ նման կղզի, որ կին խեղա
գարների ապաստարանն է, ուր ինամողները
ընականապէս միանշանակներ են: Այս բոլորը
գեղեցիկ է, ափսոս սակայն, որ «Fate bene,
fratelli»-ն քրիստոնեայ աշխարհում շատ ուշ է
հասնում.—մեծ մասամբ այն ժամանակ, երբ
թշուառ տանջանքների եւ խեղճութեան ե
րեսից անպէտքացած գտնում է ապաստանի
առարկայ...

Մեր առջեւ է այժմ մի փոքրիկ կղզի կար
միր չինութիւններով... Ս. Ղազարն է, այն
համեստ անկիւնը, որ մեր նոր կեանքի վե
րանութեան չըջանում այնքան խոշոր զեր է
խաղաղել: Եւ այլ եւս աչք չեմ հեռացնում:
Բոլոր չինութիւններից վեր բարձրանում է
սպիտակ զանգակատունը կարմիր եկեղեցու
վրա: Զրածից ցածր պարսպի ետեւից երեւում
են փոքրիկ պողատու ծառերի կատարներն ու
ստուերախիտ նոճիկները: Մի րօպէ՛ չինութիւն
ների այս վառ կարմրութիւնը, ծառերի կա
նաչը, ջրերի փայլը, այս զանգակատունը, եւ
կեղեցին՝ ծովային հորիզոնի վրա խառնվում
են իրար արեգակի վառ շողերի տակ եւ
ստացվում է մի ֆանտաստիկ տեսարան, ուր
հայեացքը չիթվում է եւ չը գիտէ որին առա
ւելութիւն տալ, ինչին նայէ, որ կողմը ուշը
դարձնէ: Թոււմ է թէ Աղբիական ծովն ա
մենից աւելի այս կղզին է գուրգուրում, որ

—Հողեմ գլուխներդ...
Անկողմնապահ պատմութիւնը, սակայն, ա
սում է, որ Ղալայի երեւանները այնքան բար
ձր ձայնով չեն արտասանել իրանց սպառ
նալիքները, որ կանայք լսէին: Բայց դա,
ի հարկէ, նշանակութիւն չունի: Եղիշ վար
դապետ Մուրադեանը լուծ է Ախալցխա
յում եւ... Նա ընդունել էր ընտելութիւնը,
նորհակալութիւն էր յայտնել. բայց, իմանալով,
թէ ինչպէս ինտրիգը երեւանից ձանապարհվել
է թաւրդի, ինչպէս է այնտեղ չաղայել եւ դեռ
որքան ու որքան պիտի չաղանայ, երբ դայ
հասնէ Եղիշին—«Եղիշն է դնում», ինչպէս
ասում են թիւրքահայերը, հրաժարվում է:

Եւ այսպէս, Թաւրդը դարձեալ առանց ա
ռաջնորդի է. նորից ընտելական ժողով, նո
րից, երեւի, բնիկները երեւանների ու չա
փանանների ընդհարումներ... Ինչո՞ւ.—Ինտրի
գը յաղթանակեց: Ինտրիգը կործանեց: Կաղզ
ւանում սկսածը ապօթէօզ է գտնում թաւ
րիզում: Թող, ասում է Մուրադեան վարդա
պետը,—թող պարծենայ Պարզեանը. հրաժար
վում եմ. թող ժողովուրդը հասկանայ...

Ժողովուրդը նոր չը պիտի հասկանայ, ժո
ղովուրդը հասկացել է նոյն իսկ աւելին քան
հարկաւոր էր: Եւ ինչ: Ծառ հարկաւոր է այդ
բոլորը Եղիշում: Եւստ լաւ համար: Դուք այն
առաջը, մի Պարզեանին պարծենալու առիթ
տալու համար, անտես անել Ատրպատականի
թեմը, մի ամբողջ ժողովուրդ:

Ճիշտ է, Թաւրդում աղայականութիւնը ա
մենակարող է. Ղալայի բնիկները երեւան
ները, ճիշտ է, շատ չուտ ցոյց կը տային, թէ
իրանք ինչպիսիք անձեռնհասներ, ինչպիսիք ան
կարողներ են: Եւ մենք համոզված ենք, որ
Եղիշ վարդապետը շատ չուտով ստիպված
պիտի լինէր նորից բռնել Արաքսի այս կողմը
բերող ձանապարհը: Այժմեան Եղիշում գրու
թիւնը ոչինչ կասկած չէ թողնում, որ այդպէս
կը լինէր: Եթէ Կաղզուանում մի հայ աղայ
արեց այն, ինչ ուղղում էր, հապա ինչ չէին
կարող անել թաւրդի այն աղաները, որոնք

պէս հեռու երկրից իր գիրկն ընկած մի աղ
նուաղարմ որը, որ ամենից աւելի է խնամքի
կարօտ... Գեղեցիկ է ս. Ղազարը:

Նաւակը սուրալով կանգ է առնում մուտքի
քարեայ աստիճանների առաջ. ձեր իտալացի
դանապանը օգնում է հիւրերին դուրս գալու
նաւակից: Վերին աստիճանի դռանէլ է առա
ջին տպագրութիւնը, երբ մարդ ներս է մտ
նում: Բակը ներկայացնում է մի քառակուսի,
լաւ մշակված պարտէզ՝ ծաղկաշատ եւ ստուե
րախիտ. չորս կողմից անցնում են երկայն,
համաչափ եւ համանման սինապարդ սրահներ
(portique). ծաղկիկներն ու կանաչ բաղնիկները
չորս կողմից իզարարաբար զարարվում են սպի
տակ, նուրբ սիւների մէջքին, գեղարուեստա
կան անհոգութեամբ փարում են երկաթեայ
վանդակապատի ճաղերին, տեղտեղ պատում
են սրահի բաց կողմը, ու կամարների տակ
ստեղծվում է մի կրօնական կիսաստուեր, որ
զուրկ չէ խորհրդաւորութիւնից:

Ճաշի ժամ է, գրքում ոչ որ չը կայ. պար
տէզի կենտրոնում արուեստական աւաղան կայ,
ծածկված սիւնու վէրանալայով. եւ այդ աւա
ւաղանի մէջ մի հատիկ. կարմիր ձուկ. նա
շարժվում է մեղմութեամբ, ասես վախենում
է իր խղճով պոչի թափով աղմկել չորս կող
մի լուսութիւնը, երեւին մնում է անշարժ՝ թե
պար փռած, ասես մտածելով՝ թէ ինչպէս
շարժվի, որ աղմուկ չը լինի, որ անհամես
տութիւն չանի. երեւին իջնում է ջրի խորքը,
երբ արեւի շողերը շատ են ոսկեղօծում նրա
փոքրիկ մէջքը ու կարմիր թիւերը. համեստ
է ու մենաւոր, որպէս մի վանական: Եւ դեռ
երբեք այսքան տխուր, այսքան միւսամոլոն
ձուկ չեմ տեսել. հասկանալի է. չէ որ ձկները
մենակեցութեան սովոր չեն. փողթ չէ նոյն
իսկ, եթէ այդ Միթիթարեանների աւաղանում
լինի: Խնդ, զգաղը ձուկ...
Իմ միայնութիւնը երկար չի տևում: Ահա

Այնուհետեւ կարաւ-Մուրգա կողմերով Եւ-
մարի:

Շուշույ «Тифлис. Листок» լրագրին հեռա-
գրում են. «Եւրալից Շուշույ գնացող պատը
լեռնային հեղեղատու տարաւ եւ գցեց Գար-
գար գետակը: Խեղդովեց «պոչաւորն» Սվե-
չեվսկի: Պատի մի մասը գտնված է»:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Վերջին օրերը
շատ չոր է անում այստեղ: Անձրեւներ չեն
գալիս»:

ԵրեմիԱՆԻՑ մեզ գրում են. «Ցորենը չա-
րունակում է էժանանալ: Բայց հացի գինը
բարձրացրին լիդրը 24 կոպէկից 26 կոպէկ,
իսկ միսը 9 կ., որը շատ թանկ գին է մեզ
համար: Մինչեւ Բր չայգէս»:

ԳՐՈՒԹ մեզ գրում են. «Ս. Սանտիանոս
եկեղեցում պատահած մի դէպք խօսակցու-
թեան առարկայ է դարձել ամբողջ քաղաքում:
Ննջեցիսը եկեղեցու մէջտեղ դրած եւ եկե-
ղեցին էլ ժողովրդով լիքն է. «խորհուրդ խորին»
ասելու ժամանակ երկու քահանաներ, ժամա-
սացութիւնը խանգարելով, իրար հետ վէճի
բռնվեցին եւ իրար լաւ հայեցեցին, խայտա-
ռակեցին, փիղոնները վրաներից հանեցին: Եթէ
ժողովուրդը չը միջամտէր, բանը մուշտի կուռի
էր հասնելու: Կեցցեն մեր քահանաները, եւս
առաւել կեցցէ մեր տեղական հոգեւոր իշխա-
նութիւնը»:

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Հինգ
աւազակ, որոնցից երեքը լաւաւորեցի եւ
երկուսը զաղագրեց թուրքեր, յունիսի 6-ին,
ճրագները վառելու ժամանակ, իրնված յար-
ձակում են զարայեալցի իսկուղար Գա-
զիմ օղլու տան վրա եւ տանտէր Իս-
կանդարին փախցնում եւ մի անտառում պա-
հում, որպէս զի նրա եղբորից մի գուժար
ստանան եւ բաց թողնեն: Բայց, ինչպէս ինքը
Գազիմ օղլին է պատմում, երկու օրից յետոյ
նա փախել է, երբ աւազակները քնած են եղել»:

ԲԱՐԱՆԱՍԱՐԱՆԻՑ մեզ գրում են, «Մայիսի
28-ի գիշերը թուրքերը մեր սարից գողնում
են 16 հատ ապրանք—12-ը գոմէշ, 4-ը կով
եւ եղջ. գոմէշներից փախչում են միայն 3-ը,
մնացածը տանում են: Թէեւ հետք տարել են
թուրքերի սարը հասցրել, բայց անօգուտ Այս
մասին յայտնվեց ուր հարկն է: Գաւառապետը
խոստացել է 4 հրացան տալ պահապանների
համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Paris Nouvelles» թերթի խօսքով, յայտ-
նի պրօֆէսոր Վամբերի գնաց Անգլիա, ուր
գիտաւարութիւն ունի սեպտեմբերին մի շարք
դասախօսութիւններ կարդալ Ռուսաստանի
դէմ: Եղուարդ թագաւորը երկարատեւ ուն-
կանութեան ընդունելով Վամբերին, մեծ
համակրութեամբ վերաբերվեց նրան: Մաջա-
րական պրօֆէսորի բարեկամները հաւատաց-
նում են, թէ նա ջերմ կերպով համոզում էր
Եղուարդ թագաւորին Անգլիայի եւ սուլթանի
միջեւ սերտ համաձայնութեան անհրաժեշտու-
թիւնը: Ի նկատի ունենալով համալսարանական
չարժանք մեծ նշանակութիւնը Հնդկաստա-
նում Վամբերի հաւատացնում է, որ դա միակ
միջոցն է Անգլիայի համար՝ անխուսափելի
բարդութիւնների առաջն առնել Աւգանիստանի
կողմից:

«Իդրամ» լրագրը հաղորդում է, որ սուլ-
թանը, կամենալով յաւերժացնել այն «արտա-
գին եւ անխախտի բարեկամութիւնը», որ
գոյութիւն ունի Թուրքիայի եւ Գերմանիայի
մէջ, Վիլհելմ կայսրին յայտնել է իր ցանկու-
թիւնը՝ բաց անել Բերլինում մի հիւանդանոց
իր անունով:

Վիլհելմ կայսրը պատրաստել է այն մեղա-
լի պատկերը, որ պիտի ձուլվի ի յիշատակ չի-
նական պատերազմի: Մեղալի վրա նկարված
կը լինի արծիւ, որ խեղդում է իր մագիլները
մէջ վիշապին:

—Չինաստանի Հոնգ-Կոնգ քաղաքում ժան-
տախդ սոսկալի չիպիեր ընդունեց. 1202 հի-
ւանդացածներից 1113 հոգի մեռան:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

—Միջին ճանապարհը բռնեցէք:
—Հաշտութեամբ վերջացրէք:
Անա այն խրատները, որ լուսն էի եւ վեր-
ջին շարժումները, երբ խօսք էր բացվում մեր

ընթացիկ գործերի, մեր օրվայ չարքների
մասին:

Եւ շատերը հաւանում էին այդ խրատները:
—Ճիշտ է, ճիշտ է, ասում էին նրանք, պէտք
է գործին սուր կերպարանք չը տալ:

—Մայրաքաղաքի իշխանները վշտակարար են, կըր-
կնում էին միւսները, արդարութիւնը միշտ
նրանց միջեւն է նստած լինում:

Եւ շատ անգամ եւս լսել այդ խրատները եւ
մի բանի վրա միայն շատ եւս զարմացել, այն է
թէ ինչպէս մարդիկ նոյն խրատը կարգում են
ամեն օր, ամեն դէպքում, խտրութիւն չը
գնելով իրերի, երեւոյթների եւ հանգամանքների
մէջ:

Արդարեւ, ինչու երեւոյթներ եւ ծխականներ
կուտում են, երբ նրանք կարող էին հաշտ ապ-
րել միմեանց հետ:

Ինչու դպրոցական հոգաբարձութիւնները եւ
հոգեւոր իշխանութիւնը միմեանց խանգարում
են, երբ նրանք պէտք է համերաշխ գործէին:

Ինչու, յիշողի գրամատները եւ պարտապանը
չը պէտք է փոխադարձ գիշտութեամբ առաջ
տանէին իրանց գործերը:

Այդ տեսակ հարցեր կարելի էր չարել, որ-
քան ցանկանալը:

Բայց ինչ օգուտ:
Միթէ այդպիսի հարցեր դնելով մի որ եւ
է խնդիր է լուծվում:

Հաշտութիւնը գրաւիչ է երեւում: Մայրե-
կեղծութիւններ ողորկելը նպատակաւորմար է
թուում:

Սակայն հասարակական գործեր քննելու եւ
վարելու ժամանակ միթէ դրանք են գլխաւոր
նպատակները:

Մի մարդ հասարակական փողեր է վառնել,
կաշառքներ է կերել, անիրաւութիւններ է
կատարել:

Անկասկած պէտք է քննել նրա արարքները
եւ նրան գատմի:

—Ոչ, ասում են ձեզ, մի քննեցէք, մի
կերպ եւս պարէք:

—Ո՞վ է կողոպտել, ո՞վ չէ գողնել, նկատում
է մի ուրիշը:

—Հաշտվեցէք, հաշտվեցէք, խրատում է եր-
րորդը:

Հաշտվել, միմեանց հետ չը կուտ—միթէ
գնդեցիկ առաջարկութիւնն է:

Ինչու չը հաշտվել:
Բայց ինչպէս:

Միթէ դառնալ գողակից, միթէ թագցնել
գնդումները, միթէ վաւերացնել ասպատա-
կութիւնները:

Էհ, պարոններ, ինչ էք այդքան ծանր ու
թեթեւ անում եւ հաստ ու բարակ ջոկում,
համարելովեք միմեանց հետ, միմեանց ձեռք
սեղմեցէք եւ միմեանց կենաց խնայէք—պար-
ձաւ գնաց:

Կարծես հասարակական գործը առուտուր
լինի:

Վերցնե՛ք մի օրինակ:
—Փանի է այս խաղողի գինը, հարցնում էք
ծախողից:

—Փունտը 10 կոպէկ, պատասխանում է նա:
—Եւ կը տամ 8 կոպէկ, պատասխանում էք
դուք:

Սակարկութիւնը, խօշորէ՛ք վերջանում է
նրանով, որ զուգ գնում էք խաղող ոչ տասն
եւ ոչ ութ, այլ ինն կոպէկով:

Ահա ձեզ եւ փրկարար միջինը:

Մի ուրիշ օրինակ:

Դուք նման չէք ոչ այն ձեռք հարեւանին, որ
սիրում է ցուրտ սենեակ, որտեղ 10—12 աս-
տիճան միայն տաքութիւն կայ, եւ ոչ միւս
հարեւանին, որ սիրում է 18—20 աստիճան:

Թէ առաջին եւ թէ երկրորդը ձեզ համար
չափազանցութիւններ են: Դուք սիրում էք
սենեակ, որ ունի զիջումը 15—16 աստիճան:
Տաքութեան այդ աստիճանը ձեզ գոհացնում
է իրովին:

Ահա դարձեալ միջինը: Նա փրկարար է:
Բայց ձեռք զրկւած է, դիցուե՛ք, մի այս
տեսակ հանգամանք:

Գաւառի մի կէտում եղել է առատ հունձ եւ
ցղվել են գիւղական շտեմարանները, իսկ միւս
կէտում կարկուտի, երաշտի, միջամտելի չնոր-
հիւ բոլոր բերքը ոչնչացել է: Գիւղացիների մի
կէտը հարուստ է, միւսը աղքատ:

Գումարեցէք այդ հարստութիւնը աղքատու-
թեան հետ եւ կը ստանաք դաւաճի բերքի
մասին մի միջին թիւ:

Միթէ կարող էք ասել, որ դաւաճի բնակիչ
ները միջակ կերպով ապահովված են:

Ոչ եւ ոչ:

Աղքատը աղքատ է եւ նրա մասին պէտք է
հոգաք: Այստեղ միջին թիւը ոչինչ օգուտ չի
տալ ձեզ:

Որքան ուզում էք հաշտեցէ՛ք այդ ծայրա-
յեղութիւնները—նրանք կը մնան անշատ եւ
ուրոյն երեւոյթներ:

Միջինը որոնեցէ՛ք եւ ջատագովեցէ՛ք այն
ժամանակ, երբ դա նշանակութիւն ունի եւ
ինքն ըստ ինքեան միայն չափազանցութիւն-
ները սեղմացնելու մի ջանք է:

Իսկ երբ մէկը գողացել է, աղնութեան դէմ
մեղանչել է, հարստահարութեամբ է պարապ-
վել, անբարոյական կենսել է վարել, մարդ է
սպանել եւ այդ փաստերի կան հաստատ ա-
պացոյցներ, այն ժամանակ ինչ խօսք կարող

է լինել միջին ճանապարհի եւ հաշտութեան
մասին:

Դուք կարծում էք թէ կարող է մարդ
լինել:

Կիսագող,
կիսապիւ,
կիսահարստահարող,
կիսանարկայական,
կիսամարդասպան:

Բայց այն ժամանակ ձեզ էլ կարող են ասել,
որ դուք կիսամարդ էք, կիսախղճով, կիսահա-
մոզմունքով եւ կիսախելքով:

Վրձին

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՅ ԳՈՐԴԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

8 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Մեծ Իշխան Գեորգի Մի-
խայիլիչի ամուսին Մեծ Իշխանուհի Մարիա
Գեորգիւնայ յուլիսի 7-ին բարեկապութեամբ
աղաւաղեց եւ բերեց Աղլիկ, որի անունը դրվեց
Նինա:

Բիւլլետէն յունիսի 7-ից. «Մեծ Իշխանուհու
եւ Բարձր Նորածնի առողջական դրութիւնը
կատարելապէս գոհացուցիչ է»:

Կիւնի: Դուռնայի նիստի մէջ վճովեց արկանել
առ ոտս Նոցա Կայսերական Մեծութիւնների
անսահման ուրախութեան եւ հաւատարմի
անձնուիրութեան զգացմունքները եւ նշանա-
ւոր կացուցանել Մեծ Իշխանուհի Անաստասիա
Նիկոլայեւնայի ծննդեան ուրախարիթ զէպը:

Հիմնելով երկու քաղաքային տարրական դպ-
րոցներ Մեծ Իշխանուհու անունով:

ՇԱՆԳՀԱՅ: Վախենում են, որ բուն Ձինա-
տանի հիւսիսային նահանգներում լուրջ ան-
կարգութիւններ կարող են ծագել: Արժանա-
հաւատ տեղեկութիւնների համեմատ, գններալ
Տուսնուսեան նախապատրաստում է լաւ վարժ-
ված զորքերի մի մեծ խումբ՝ ապստամբու-
թիւն բարձրացնելու կայսրի դէմ:

ԿԱՊԵՏՆԱՎ: Հրատարակված է Յիւլիոսու-
նի մօտ տեղի ունեցած ճակատամարտի հետե-
ւեալ նկարագրութիւնը: «Բօէրները մի փոքր
ժամանակ ուժեղացան էին անգլիացիներին
նրանցից խլած թնդանթներով: Վեց ուսման
ընկան Դիկսոնի զօրախմբի ձախ թւելի վրա:

Ետոյ անգլիացիները յետ խնցիկ իրանց թըն-
դանթները, Դերբիերեան գունդը յարձակվեց
բօէրների վրա սուրիներով, բօէրները փախան,
նրանց կորուստները ընդհանուր թիւն է 60
հոգի սպանված եւ վիրաւորված:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ռուսաց զեսպան կոմս Կասի-
նի խորհրդակցեց ատառա-սէկրէտար Գէլի հետ
սակագին նկատմամբ եղած կարգադրութեան
վերաբերեալ բոլոր մասնաւոր հարցերի մա-
սին: Ասում են, թէ Կասինի նորից հաւաս-
տիացումներ ներկայացրեց, որ Ռուսաստանի
բռնած դիրքը քաղաքական նկատումներից չէ
զրկված եւ կապված չէ ամերիկական ապ-
րանքների ներմուծման դէմ Եւրոպայում սկս-
ված ընդհանուր ջարժման հետ:

ՆԻՒԵՐՈՎ: Յունիսի 21-ից Ֆիլիպպեան
կղզիների գինւորական վարչութիւնը կը փո-
խարինվի քաղաքացիականով: Առաջին նահան-
գապետը կը նշանակվի դատաւոր Տաֆտ:

ՄԻՆԱՍՈ: Ի պատիւ աստուծո-ունգարական
ղլխաւոր շտաբի հրամանատար գեներալ Բէկի
կարլ թագաւորը մի կենաց առաջարկեց, որի
մէջ չեղելով մասնացոյց արեց այն բանի վրա,
թէ աւստրիական օֆիցէրների ներկայութիւնը
այնպիսի տեղում, որը առաջ արդէն նուիրա-
գործված էր կայսր Յոսեֆ Յոսեֆի ներկա-
յութեամբ, նոր ապացոյց է Ռուսիայի գերա-
զանց յարաբերութիւնների հարեւան կայսրու-
թեան հետ: Ապա թագաւորը բարեկամութեան
այդ յարաբերութիւնները գնալով աւելի եւ
աւելի ամրանաւ վերջում թագաւորը «hoch»
կանչեց ի պատիւ կայսրի եւ աւստրիական
քաջ զօրքի: Գեներալ Բէկ շնորհակալութիւն
յայտնեց եւ առաջարկեց թագաւորի կենացը,
որով հիանում է աւստրիական զօրքը Պէլզ-
նայի մօտ նրա կատարած քաջագործութեան
համար, եւ արքայական տան կենացը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Այսօր հրատարակված «Կար-
միր գրքից», 1898 թվի համար, երեւում է, որ
սպանական պատերազմի սկզբում արտաքին
գործերի մինիստրութիւնը Վաշինգտոնում
հրամանագրեց Լօնդոնի ամէրիկական զեսպա-
նին զգուշութեամբ տեղեկութիւններ իմանալ
բրիտանական կառավարութիւնից, թէ արդեօք
հնարաւոր է, որ ամէրիկական զինւորական
նաւերը կարողանան անցնել Սուէզի ջրանցքով:

Պատասխանը օտարվեց այն մտքով, թէ Մեծ
Բրիտանիան անվիճելի է համարում Միացեալ-
Նահանգների իրաւունքը օգտվել Սուէզեան

ջրանցքից իր զինւորական նաւերի համար:
Այնուհետեւ «Կարմիր գրքում» ասված է, թէ
օտար կառավարութիւնների մեծ մասը, բացի
Գերմանիայից, յայտարարեցին, որ չէզոքու-
թիւն են պահպանելու: Ամերիկական զեսպան
Ուայտ այդ մասին խօսակցութիւն ունեցաւ
կոմս Բիւլլի հետ, որ ասաց նրան, թէ Գեր-
մանիան արդէն քսան տարուց ի վեր երբեք
չի յայտնել, թէ ինքը չէզոք է մնալու:

ՊԱՐԻՉ: Իշխան Ռուստովի նախաձեռնու-
թեամբ, զեպանատան եկեղեցում Մեծ Իշխա-
նուհի Անաստասիա Նիկոլայեւնայի ծննդեան
առիթով տեղի ունեցաւ հանդիսաւոր ժամա-
սացութիւն, որին ներկայ էին գերմանական,
սերբական եւ բոլղարական զեսպանները,
մինիստր Դէլկասէի ներկայացուցիչները, զես-
պանութեան բոլոր անդամները եւ ուսու դա-
ղութի անդամներ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ռուսաց զեսպան կոմս Կա-
սինի յայտնում է, թէ ինքը չէ նախատեսել
այն տարիֆային միջոցները, որ Միացեալ-Նա-
հանգների կառավարութիւնը ձեռք է առել
Ռուսաստանի դէմ: Նա լուրջ նշանակութիւն
է տալիս նրանց, բայց յոյս ունի, որ կաղովի
բաւարար համաձայնութեան դալ: «Ռուսաս-
տանի բռնած ընթացքը,—ասում է նա,—բա-
ցատրվում է բացառապէս անտեսական նկա-
տումներով: Դեսպանը հաստատ համոզված է,
որ այդ ընթացքի հիմքը չէ կարող լինել որ
եւ է անապագայի միացեալ-Նահանգների
դէմ, ուստի եւ այդ գործին չէ կարելի տալ
որ եւ է քաղաքական նշանակութիւն. այդ
զուտ առեւտրական հարց է»:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ստատս-սէկրէտար Գէլ, պա-
տասխանելով այն յայտադրին, որ տուեց նրան
ուսաց զեսպան կոմս Կասինի, առարկում է
այդ յայտադրում առաջ բերված այն մտքի
դէմ, թէ Ամերիկայի բռնած ընթացքի մէջ ե-
րեւում է խտրականութիւն Ռուսաստանի վե-
րաբերմամբ: Գէլ այնուհետեւ խնդրում է հա-
րաւորութիւն տալ իրան քննութիւն ներկա-
յացնել այն հարցը, թէ արդեօք ուսաց կայ-
սերական կառավարութեան ձեռք առած մի-
ջոցները չեն հակասում այն իրաւունքներին,
որոնք պատկանում են Միացեալ-Նահանգնե-
րին, առեւտրի եւ նաւագնացութեան վերա-
բերմամբ գոյութիւն ունեցող դաշնագրերի
հիման վրա:

ԽԱՐԿՈՎ: Բուրդը ծախվում է 7 ռ. 25
կոպէկից մինչեւ 9 ռ. 5 կոպէկ: Ծախված է
եղած բրդի կէսից շատ աւելի: Ոչխարի մորթ
բերված է 40,000 պուդ: Ծախվում է 7 ռուբ-
լուց մինչեւ 8 ռուբլի պուդը. ծախված է
գրեթէ բոլոր եղածը:

9 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագուհի Կայսրուհի Մա-
րիա Ֆէօդորովնայ Մեծ Իշխանուհի Օլգա Ա-
լեքսանդրովնայի հետ յունիսի 8-ին բարեհա-
ձեց տեղափոխվել Գատչինայից Նովի Պետեր-
հօֆ՝ ամառային բնակութեան համար:

Բիւլլետէն յունիսի 8-ից. «Թագուհի Կայս-
րուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնայի եւ Բարձր
Նորածնի առողջական դրութիւնը ամեն կող-
մից լիովին գոհացուցիչ է»:

Ներքին գործերի, ժողովրդական լուսաւո-
րութեան, արդարադատութեան մինիստրները
եւ արազան սինդիկատները—պրօկուրորը, յունիսի
8-ին խորհրդակցելով, որոշեցին բոլորովին դա-
դարեցնել Պետերբուրգում լոյս տեսնող «Жизнь»
ամսագրի հրատարակութիւնը:

Ձերնիդովից. Պետրոգրադայից, Տվերից եւ
Վարչաւայից հեռագիրներ են ստացված, որ
գոհացողական մարթնքներ են տեղի ունեցել
Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորով-
նայի բարեկապող ազատման առիթով:

ՄՕՍԿՎԱ:

մի քանի գաւառներում ցանքերը սաստիկ վնասվել են կարկուտից: Թէ որքան մեծ են այդ վնասները, կարելի է դատել նրանով, որ կարկուտից փոխադարձ ապահովագրութեան Մոսկովայի բնկերութիւնը վնասների համար վճարել է մօտ 73,000 ռուբլի, չը նայած, որ միայն մի քանի հողատերեր են ապահովագրել իրանց ցանքերը: Վնասվել են մանաւանդ Նօփօրացոմակի և Գրուբելովսկի գաւառները: ՎԱՇԽԻՖՏՕՆ: Մինիստրութիւնը հաւանութիւն տուեց ֆինանսների մինիստրի օգնականի կարգադրութիւններին, որով հաւասարեցուցիչ մաքս է դրված մի քանի ուսուական ապրանքների վրա:

ԿԻՆ, Մինձ Գրուբ Մէլկեւորդ-Շվերինսկի իր մօր և Մինձ Իլյանուհի Անաստասիա Միլայովայի հետ երկուսն էլ ժամանեց այստեղ: Նրան հանդիպեցին կայսրը և ուսուցիչ ՎԵՄԵԼԱՆԱ կրէյսերի նաւապետը: Բոլոր օգոստոսիս անձնատուութիւնները գնացին «Հօհենցօլերն» զբօսանաւը, որից յետոյ կայսրը ճանապարհ գցեց մեծ զուգարի և Մինձ Իլյանուհուն մինչև «Շվեդլան» կրէյսերը ու յետոյ վերադարձաւ «Հօհենցօլերն»:

ԼՕՆԴՈՆ: Երեկոյեան «Sun» լրագիրը հաղորդում է դեռ ոչ մի կողմից չը հաստատված մի լուր, իբր թէ գնեկեալ Բօտա և Նրան ստորագրեալ բօլսերակն զօրապետները որոշել են անձնատուութիւնը, եւ իբր թէ կարծւում է, թէ նրանք արդէն անձնատուութիւն են եղել:

ԼՕՆԴՈՆ: Լրդերի ժողովը երկրորդ քննութեանը բնգունեց արքունիքի պահպանութեան ծախսերին վերաբերեալ օրինագիծը:

Պէկին: Մի ժամանակից ի վեր լուր է պլաւաւում, թէ Սան Կարպանտում սպանված են չորս ընկերական միսիօնէրներ: Այդ լուրին չէին հաւատում, որովհետեւ այդ չորսն ինչ տարբերութիւն ունեցող չինացի մանգոլները հերքում էին այդ լուրը: Ճշտութիւնը վերջապէս այդ լուրերը այնքան յամառ կերպով էին տարածվում, որ ընկերական դեսպանը այսօր ստերանդակներ ուղարկեց այդ լուրերի հիմնաւորութիւնը հաւաստելու համար: Բեկինական միսիօնի սաստիկ ամբարցում է և քահանաները բնիկ քրիստոնեաների հետ մնում էին այստեղ վերջին ապստամբութեան ժամանակ, ստանց ընտրութիւններին ենթարկվելու: Պատմում են, թէ Տունֆուսանի գինուրենբերը, որոնք այդ կողմն էին գնում ապրիլ ամսին, յարձակվել են միսիօնի վրա այն միջոցին, երբ դարպասը բաց էր մնացել: Նրանք սպանել են այնտեղ ապրողներին և կողոպտել են զոյքը: Տեղի հեռաւորութիւնը և տեղադրութեան պայմանները անհնար են դարձրել ազատարար արշաւանութիւնը ուղարկելը:

Պէկին: Կայսրը ծղունդ-ի-Լամանի նախկին փոխ-նախագահ Նատունին (Մանջուր) նշանակեց դեսպան Եւրոպայում: Նատուն, ընդհանուր կարծիքով, ՎՄԻԸ Բառնցիք պարագլուխներից է և հազիւ հազ ազատվեց այն անձանց ցուցակը ընկնելուց, որոնց զխառուժը պահանջում էին դեսպանները: Եւրոպայի զօրուար թէ ընդունի այդ նշանակումը:

ԵՕԿՈՋԱՄԱ: Գօշէ-Տօրու, հաղորդակցութեան ճանապարհների նախկին մինիստրը մարկիզ Իտի կարինէտում, այսօր քաղաքային ներկայացուցչութեան նիստում մէք ստացաւ դաշնային հարուածով և իսկոյն վախճանվեց: Սպանվածն առաջ պատգամաւորների ժողովի նախագահ էր և դեսպան Վալինգտոնում: Սպանութեան պատճառը ըստ երեւոյթի քաղաքական է:

ԼՕՆԴՈՆ: Հարաւային Աֆրիկան բնակեցնելու համար կազմված յանձնաժողովի զեկուցման մէջ հաստատ համոզմունք է յայտնված, որ Հարաւային Աֆրիկան անգլիական ծագումով մարդկանցով բնակեցնելու լաւ մտածված ծրագիրը չափ մեծ նշանակութիւն ունի Աֆրիկայի հարաւի ապագայ առաջդիմութեան համար և եթէ ամենամեծ ջանքեր չը գործադրվեն հարաւային Աֆրիկայի կատարեալ բրիտանական ազգաբնակչութիւն տալու, որ բաւական զօրեղ լինի անկախութիւնների առաջն անկելու արիւնով և զրամով բոլոր զոհարարութիւնները անօգուտ կանցնեն: Ամենեւին կապած չը կայ, — չարունակում է զեկուցումը, — որ լաւ զեկավարված քաղաքականութիւնը կարող է կատարելապէս անգլիական պետութիւն դարձնել նոր կոյտիանները, որը կայսրութեան համար էլ լինի ոյժի ոչ թէ թուլութեան տարր:

ԼՕՆԴՈՆ: Նախկին մինիստր և Հնդկաստանի փոխարքայ մարկիզ Բայազոն հրատարակեց մի նամակ, որի մէջ բողոքում է փախստականների վերաբերմամբ գործ դրվող բանակա-

յին օրհանովի դէմ: Ինքը ամօթ է զգում, որ այդպիսի բաներ հնարաւոր են բրիտանական վարչութեան տակ: Հարցը քաղաքական չէ, այլ վերաբերում է երկրի պատմին: Բայազոն աւելացնում է, որ ոչ մի անձնատուութիւն չէ կարող պատառնաւորութիւն լինել այդ բանի համար, սակայն չը կայ այնպիսի դատաւարութիւն, որ չափազանց խիստ լինի այդ օրհանովի վերաբերմամբ: Ազատամիտ կուսակցութեան պարագլուխ Կէմպելը — Բանէրման նոյնպէս նամակ է հրատարակել, որի մէջ ասում է, թէ ամբողջ մի ժողովրդի ջնջումը կամ լոսնի ոյժով նրան ճնշելը չէ կարող երբէք մանկ Անգլիայի քաղաքական ծրագրի մէջ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Յունիսի 8-ին զրգեց Սուվորովեան թանգարանի հիմքը Պրեքորատենսկի հրատարակում, ընդհանուր շտաբի Նիկոլայովսկայա Ակադեմիայի նոր կառուցվող շէնքերի շարքում:

ՅՈՒՆԻՆԻՍԿԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԶԵՆՈՒՄԻՆԻՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՄԱՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՆՆԻՆԻՆԻՆԵՐ

Կիրակի, յունիսի 10-ին Հայ դերասանական ընկերութեան անդամները կը ներկայացնեն

«ԱՐԴԻՆԱՆԻՈՐ ՊԱՇՏՏՈՆ»

Կով. 4 դրոմ. 5նդ. ծաղկակաւ Սկիզբն է ուղիղ 8 1/2 ժամին երեկոյեան: Տօնակների գինն է 30 կօպէկից մինչև 1 ռուբ. 25 կօպ. ծախվում են այդուս: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը խնդրաւոր խնդրում է ժողովարանի պալատի մեծ սրահը շնորհ բերել կրկին անգամ

Ընդհանուր ժողովի,

որ նշանակված է յունիսի 20-ին, չորեքշաբթի, երեկոյեան 10 ժամին յունիսի 6-ին չը կայացած ժողովի փութարէն՝ քննելու ընթացիկ գործերը և ընտրելու կանցիդաները: (10 և 17-ին) 1—2

ՎԱՐՁՈՎ Ե ՏՐՎՈՒՄ

Վերին յարկում, կառուարված մի մեծ սենեակ, ծառայով. կարելի է վարձել ամսով և օրով: Театральная ул., № 10, Արքունական թատրոնի մօտ: 1—1

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՅԻՍ. ԳԱՐՄԻՆԻՍԻՆԵՐ, ՋՈՒԹԱԿԵՐ, ԳԻԹԱՆԵՐ, ՖԼԱՅՆԵՐ, ԿԼԱՐԵՏԵՆԵՐ, ՁԱՅՆԱՍԶԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ՍՅԱՆ, ԵՒ ՍՅԱՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս: ՊՐԵՍԿԱԿՈՒՐԱՆՏՆ ուղարկվում է ձրի: ԵՐԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱՍԶԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԻԵՊՕ Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ Մատակարար Կայսերական Նրաժշտական Ընկերութեան Մузыкальное депо Б. М. Мириманиана, ТИФЛИСЬ. Дворцовая ул., д. Т. Д. З. Банка. (Կիր.)

Հ Ր Ա Ի Է Ր

Յունիսի տասին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին, Կուկիայի ս. Աստուածածնի եկեղեցում ժողով է լինելու նախկին երէցփոխ պ. Եսայի Սրբանաւանցի գործընդհանուր քաղաքականութեան վերջնականապէս պարզ կերպով որոշումն կայացնելու և մի երկու զբաղման խնդիրներ լուծելու, ուստի օրանով հրաւիրվում են պ.պ. ծխերն ներկայ լինել յիշեալ եկեղեցում ժողովին մասնակցելու:

Գործակալ ք. մասի Թիֆլիսի Գրիգոր աւագ քահ. Մանդակունի (չ. 4.) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ իր ատենում ներկայ յունիս ամսի 14-ին նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային սպանդանոցների հիմնաւոր նորոգութեան գործը, ընդամենը 3540 ռուբլու գումարի: Աճուրդին մասնակցելու ցանկացողները կարող են պայմանները տեսնել վարչութեան յիշարարական բաժնում բոլոր լի օրերը ցերեկվայ ժամը 9-ից մինչև 2-ը: 1—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱՆԱՆՈՒԹՅՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը

Գրպանի առյաւ, աշխարհագրի մակարդակով, Էփրիկեանի գինն է	1 ռ. 75 կ.
«Էփրիկեան», Գրիգոր Արքունու	» 50 »
» ուսուրէն	» 70 »
«Թիւրքահայոց անտեսական դրութիւն», Գրիգոր Արքունու	» 30 »
«Պատրիկեանի նամակներ», Ա. Գալանթարի	» 60 »
«Կեանքի գծեր»	» 30 »
«Բանաստեղծութիւններ», Ղ. Աղայեանի	1 » 50 »
«Արութիւն և Մանուէլ»	1 » 60 »
«Այսպէս», վէպ, Ասրպետի	2 » — »
«Չարմանայի որդի», Թարգմ. Ն. Ղուկիշանեանի	» 10 »
«Բանաստեղծութիւններ», Պ. Գուրկանի	» 20 »
«Չլիթնի ներկան և անցեալը»	1 » 50 »
«Ընտիր Հայկազունք»	2 » 50 »
«Բանաստեղծութիւններ և արձակ գրութեան» Ռ. Պատկանեանի	3 » — »
«Ազատութեան ժառանգ», Թարգմ. Ա. Կ.	1 » 20 »
«Պապիկ և Թունիկ», Նրիմեան Հայրիկի	» 60 »
«Հայոց պատմութիւն» (պատկերազարդ) Յ. Ճաղարեգեանի	» 40 »
«Բառք», վէպ, Շիրվանդադէ	1 » 50 »
«Ալեքանդր»	» 50 »
«Արիւծածու Մանուէլ», Գ. Բալասանի	» 25 »
«Բարոյական առանձն», Բարխուդարեանի	» 20 »
«Բազմապէս» 1901 թ. բաժանորդագրութիւն.	4 » — »
«Վտակ ժողովածուի»	1 » — »

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Дорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустану. 1—2

ՈՒՍՈՒՄՆԵՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՆՍԻՈՆԸ ԱՄԱՐԱՅԻՆ ԳՏԱՎՈՒՄ ԵՒ ԲՈՐԺՈՄ ԱՄԱՐԱՆՈՅԻՆՈՒՄ, ԻՍԿ ԲԱԺԱՆՄԱՆԻՔԸ ԹԻՖԼԻՍԻՄ: Թէ Բօրժօմում և Թէ Թիֆլիսում ընդունում է աշակերտներ, պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, դեմիտէրնի երի, բէալական, առեւտրական և այլ ուսումնարանների համար:

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտներն են կրօն, ուսուց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուրքական, ալգերա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ուսուց և ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգչոգրութիւն, երաժշտութիւն:

Նոյն տեղը ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ: Օտարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ:

Հասցէն. БОРЖОМЪ. Гроховская ул. ПАНСИОНЪ ТЕРЪ-АКОПОВА. ТИФЛИСЬ, Гановская ул. № 11. 1—10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՅԻՄ

ծախվում են հետեւեալ հայերէն գրքերը՝

ԷՖՐԻԿԵԱՆ Հ. Ս., Գրպանի առյաւ, աշխարհագրական վիճակագրական և այլ կարեւոր տեղեկութիւնք, Վենետ. 1901 թ. գ. 1 ռ. 75 կ.

ԱՀԱՐՈՆԵԱՆ ԱԼ., Պատկերներ (վերջին տարիների տաճկահայոց կեանքից), Մոսկովա գ. 1 ռ. 1 ԷՕ, Հայկական տպագրութիւն, մի կեանքը, գրականութիւնը անցեալում, Թիֆլ. գ. 1 ռ. 50 կ.

ԱՂԱՅԵԱՆ Ղ., Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1 ռ. 50 կ.

ԱՐԵՂԵԱՆ ՄԱՆ., Հայոց լեզուի ուղղագրութիւնը, Թիֆլ. գ. 50 կ.

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍ., Հայոց գիրը, տառերի ծագումը, գիւտը, պատմական փաստաւրդ տեղեկութիւնները, Թիֆլ. գ. 1 ռ. 50 կ.

ԵՂԻՇԵԻ Պատմութիւն Վարդանանց՝ գրաւոր լեզուով—50 կ., աշխարհաբարը՝ 60 կ.

ԱՐԻՍԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԻՏՏԻ վարդապետի Հայոց պատմութիւնը—աշխարհ., Ալեքս. գ. 60 կ.

ՂԱՂԱՐ ՓԱՐՊԵՆԻ Հայոց պատմութիւնը և Վահան Մամիկոնեանի գրած թուղթը, Ար. գ. 80 կ.

ՄԻԹԱՐԵԱՆ ԱԼԷՔՍ., Տղերք ու խաղեր, ժողովածու ժողովրդական երգերի և պարերգերի Ալեքս. գ. 60 կ.

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ ՄԱԿ. Կարկի, Արցախի նահանգը, ներկայիս Շուշին իր բոլոր գաւառներով, Բագու, գ. 1 ռ. 50 կ.

ԱՆՎԵՐԴԵԱՆ Գէորգ, Սյաթ-Նօփա, Մոսկովա, գ. 50 կ.

ԿՕՄԻ, Խնամատարութիւն երեխայոց մարմնական և բարոյական, Պետերբ., գ. 1 ռ. 20 կ.

ԺՕՐԺ ՕՆԵ, Դօկտոր Ռաժօ, գոյութեան կոնսեր, Մոսկ. գ. 80 կ.

ՎԱՐԴԱՆԵԱՆ ՓԻԼԻՊ. Թարգմանութիւնները. 1) Սմայլս—Բնաւորութիւն—1 ռ. 50 կ., 2) Սմայլս—Ինքնօգնութիւն—1 ռ. 50 կ., 3) Հոմերի Իլիականը—1 ռ., 4) Հոմերի Օդիսականը—1 ռ. 20 կ., 5) Սիրտ, աշակերտ. յիշատակարանը՝ 6) Արեւելեան վիպաշարի, պատկերազարդ—20 կ., 7) Մանկիկ կեանքը—1 ռ. 20 կ., 8) Շիրէր—Աւագակներ—50 կ., 9) Կօրուրդ—15 կ., 10) Թորինգոն—20 կ., 11) Նօնցայի բերդը—30 կ., 12) Ռէնիկէ աղուէր—20 կ., 13) Բէաթրիէ—30 կ. և 14) Ապէլինիերից մինչև Անդերը—20 կ.

Դիմել՝ Тифлисъ. Въ Центральную Книжную Торговлю. (չ. ու. կ.) 3—3